28.07.2021
347-85

ՀՀ Շրջակա միջավայրի
նախարարի պաշտոնակատար
Ռոմանոս Պետրոսյանին

Տեղեկություն ստանալու հարցում

Հարգելի պարոն Պետրոսյան,

Երևանում գտնվող առևտրային մեծ կենտրոններում (օրինակ, Մեգամոլ, Երևանմոլ, Երևանպարկ և այլուր) գործող հսկայական ֆուդկորտերում, որտեղ այցելուների կողմից օրական օգտագործվում է հազարավոր պլաստիկ մեկանգամյա օգտագործման սպասք, շշեր, աղբը չի տեսակավորվում և օգտագործված պլաստիկը չի առանձնացվում ընդհանուր աղբից:

1. Խնդրում եմ, սեղմ ժամկետում պարտադրել կամ հորդորել առևտրային բոլոր կենտրոններին, որտեղ առկա են ֆուդկորտեր, իրենց միջոցներով տեղադրել աղբի տեսակավորման զամբյուղներ և հետևել հաճախորդների կողմից դրանց պատշաճ օգտագործմանը:

2. Խնդրում եմ արդյունքների մասին տեղեկացնել ինձ:

Խնդրում ենք տեղեկություն ստանալու հարցմանը պատասխանել «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածով սահմանված կարգով և ժամկետներում:

Ուշադրություն: Խնդրում ենք հարցմանը պատասխանել բացառապես ***էլեկտրոնային եղանակով:***

Հարգանքով՝
ԻԱԿ նախագահ Շուշան Դոյդոյան

Ինֆորմացիայի ազատության կենտրոն (ԻԱԿ)
ՀՀ, ք. Երևան, Բուզանդի փող. 1/3, 4-րդ հարկ, Հեռ +37491407836, Էլ. հասցե՝ foi@foi.am Կայք՝ www.foi.am